«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ Լիանա Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 317-ի 2 հարցման՝ տեղեկացնում ենք, որ.

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի գործավարությունը կազմակերպվում է աշխատակազմում գործող ներքին գործավարության կարգի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով, որը հնարավորություն չի տալիս տարանջատել տեղեկատվություն ստանալու հարցումները, քաղաքացիների դիմում-բողոքները:

2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմում գործավարությունը, այդ թվում՝ էլեկտրոնային, կազմակերպվում և իրականացվում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 07.04.2010թ. N 682-Ա հրամանով սահմանված կարգով: Հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությամբ անհատական իրավական ակտերի ուժի մեջ մտնելու համար հրապարակման պահանջ նախատեսված չէ, այն չի հրապարակվել: Միաժամանակ Ձեզ ենք ներկայացնում վերոհիշյալ հրամանը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի բաժին